ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<< Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց >> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դասավանդվող առարկան՝ որպես մշակույթի բաղկացուցիչ մաս

Կատարող՝ **Անուշիկ Գևորգյան**

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսումնական հաստատություն՝ Հրազդանի **N 2** հիմնական դպրոց

Հրազդան **2023**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն **3**

Ի՞նչ է մշակույթը.....**4**

Ուսումնական հաստատության դերը մշակութային

արժեքների պահպանման և զարգացման գործում.....**5**

Դասավանդվող առարկան՝ որպես մշակույթի

բաղկացուցիչ մաս.....**6**

Եզրակացություն.....**15**

Օգտագործված գրականության ցանկ.....**16**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում կերտել է այնպիսի մշակույթ, որով կարող է հպարտանալ յուրաքանչյուր հայ և իր առաքելությունը պետք է համարի դրա ճանաչումը, պահպանումն ու զարգացումը:Հիացմունք և ազգային հպարտություն է առաջացնում մեր մշակութային համակարգը, որ կարողացել է դիմանալ դարերի փորձությանը: Հայկական մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվել են աշխարհի բազմաթիվ մտածողներ և իրենց հիացմունքն արտահայտել մեր ազգային մշակույթի նկատմամբ: Հայ ժողովրդի համար գիրն ու գրականությունը, կրթությունը, եկեղեցին ու դպրոցը մշտապես եղել են ուղենիշներ, ազգային ինքնության պահպանման միջոց: Եվ որքան էլ փորձ է արվել ոչնչացնել հայի մշակութային նվաճումները, խլել նրանից նրա հոգևոր ինքնությունը, հայը շարունակել է կերտել իր հոգևոր, մշակութային հայրենիքը: Հատկանշական է, որ հայկական մշակույթը նպաստել է նաև այլ ժողովուրդների մշակույթների զարգացմանը: Հայը մշակութային կարևոր գործունեություն է ծավալել աշխարհի տարբեր անկյուններում՝ իր անհերքելի ներդրումն ունենալով շատ ազգերի մշակութային ժառանգության կերտման գործում: Մշակույթը իրականացնում է նաև մեկ այլ կարևոր գործառույթ՝ դաստիարակչական գործառույթը. նպաստում է անհատի համակողմանի զարգացմանը: Մարդը դառնում է անցյալի և ներկայի, ազգային և համամարդկային արժեքների կրողը: Յուրաքանչյուր նոր սերնդի կողմից մշակույթը յուրովի է ընկալվում, և մշակույթին բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ ավանդականի և արդիականի փոխկապակցվածությունն է: Խոսելով հայ ժողովրդի ինքնահանաչման, պատմական հիշողության և հոգևոր արժեքների մասին՝ պետք է կարողանանք արժևորել հայ գրականությունը՝ որպես մշակույթի բաղկացուցիչ մաս: Հայ գրականությունը հայ ժողովրդի համար իր ինքնությունը պահպանելու հզոր միջոց է եղել: Մեր գրական ժառանգությունը ունի ոչ միայն գեղարվեստական, այլև ճանաչողական նշանակություն. գրականության մեջ մենք մեր պատմական անցյալն ենք տեսնում, որն իր արտացոլքն է գտել առասպելների և վիպերգերի մեջ: Հայ գրականությունը մշտապես ծառայել է հայրենիք և հավատ արժեքների հաստատմանն ու պահպանմանը: Եվ մեր արժեքների պահպանումն ու սերունդներին փոխանցումը պետք լինի մեր գերխնդիրը:

Թեմայի արդիականությունը՝

Նկատելի է, որ այսօր մեր երիտասարդները քիչ հետաքրքրություն են դրսևորում հոգևոր մշակույթի, արվեստի և գրականության նկատմամբ: Գիտակցելով անձի հոգևոր զարգացման և դաստիարակության գործում ազգային մշակույթի անհերքելի դերը և կարևորելով մեր արժեքների պահպանումն ու գալիք սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը՝ պետք է աշակերտների շրջանում հետաքրքրություն առաջացնել ազգային մշակույթի, համաշխարհային մշակույթում դրա տեղի և դերի բացահայտման նկատմամբ և դաստիարակել սերունդ, որը կլինի մեր ազգային արժեքների, մեր հարուստ մշակույթի կրողը, պահպանողն ու զարգացնողը:

Հետազոտության նպատակն է՝

1. Ձևավորել հարգանք դեպի ազգային մշակույթն ու հոգևոր արժեքները:

2.Տարբեր արդյունավետ մեթոդների և հնարների կիրառմամբ սերմանել հետաքրքրություն «Գրականություն» առարկայի նկատմամբ:

3. Զարգացնել ունկնդրելու, հասկանալու, վերլուծելու, համադրելու կարողություններ:

4.Արժևորել գրականությունը՝ որպես արվեստի տարածական և համադրական տեսակների հիմք:

Հետազոտության առարկան՝ գրականությունը՝ որպես մշակույթի բաղկացուցիչ մաս:

Հետազոտության խնդիրները՝

1.Ներկայացնել մշակույթը ՝ որպես մարդկության գոյության իմաստավորման միջոց:

2.Բացահայտել գրականության և մշակույթի նկատմամբ հետաքրքրության անկման պատճառները՝ կատարելով տարբեր ուսումնասիրություններ:

3. Որոնել ուղիներ ու հնարներ արվեստի տարբեր տեսակների նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու նպատակով:

Հետազոտության վարկածը՝

Գրականության դասընթացը դիտել՝ որպես անձի ձևավորման, դաստիարակության և հոգևոր զարգացման կարևոր գործընթաց:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը. աշխատանքը բաղկացած է տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ի՞ՆՉ Է ՄՇԱԿՈՒՅԹԸ

«Մշակույթ» տերմինը (լատիներեն՝ «cultura») նախապես նշանակել է հողի մշակում, այնուհետև կիրառվել տարբեր բնագավառներում (օր.՝ մեղեդիների մշակում), կիրառվել է նաև մարդկանց բնութագրելիս. կիրթ պահվածք դրսևորող մարդկանց անվանում էին «կուլտուրական», իսկ ավելի ուշ համարվեց այն ամենի միասնությունը, որն ստեղծում է մարդը իր գոյության ընթացքում: Մշակույթի պատմությունն ուսումնասիրելիս հանդիպում ենք մշակույթի տարբեր սահմանումների, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է հասկացության տարբեր մեկնաբանություն: Առանձնացնում ենք մշակույթի երկու տեսակ՝ նյութական և հոգևոր: Մշակույթը հնարավորություն է տալիս ինֆորմացիան հավաքել և փոխանցել սերունդներին: Եվ այս առումով կարող ենք փաստել, որ մենք՝ հայերս, ստացել ենք հարուստ ժառանգություն, և մեզ համար առաջնային խնդիր է պահպանել այն՝ զարգացնելով և արժևորելով: Մշակույթը ազգային երևույթ է: Տվյալ ազգի բարոյահոգեբանությունը, լեզվամտածողությունը, քաղաքական և կենսական պայմանները իրենց հետքն են թողնում մշակույթի զարգացման վրա:Ազգերը տարբերվում են իրենց մշակույթով, որն արտահայտում է տվյալ ազգին բնորոշ բնավորությունն ու հոգեբանությունը: Հետևաբար յուրաքանչյուր ազգային մշակույթ ինքնատիպ է, քանի որ այն տվյալ ազգին հատուկ մտածողությունն է, բնավորությունը: Մշակույթների տարբերակման մյուս միջոցը ազգային լեզուն է: Ազգային մշակույթները, բնականաբար, չեն մնում սեփական կաղապարի մեջ, դրանցում արծարծվում են

նաև համամարդկային հարցեր, որոնք հետաքրքրում են յուրաքանչյուրին՝ անկախ ազգային պատկանելիությունից:Մշակույթի միջոցով ձևավորվում է հոգևոր հայրենիքի կերպարը, հայրենասիրությունը: Եվ ազգ-մշակույթ փոխհարաբերության մեջ ձևավորվում է անհատը: Իր աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ Հայաստանը գտնվել է Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում, և հայ մշակույթը մեր ժողովրդի համար եղել է ոչ միայն ազգապահպանման, այլև աշխարհի հետ հաղորդակցվելու միջոց: Եվ մենք՝ ուսուցիչներս, պետք է ապահովենք սովորողների տեղեկացվածությունը սեփական մշակույթի մասին, սերմանենք հետաքրքրություն և հարգանք ազգային արժեքների նկատմամբ, իսկ թե ինչպես դա կարելի է իրականացնել, կքննարկենք ստորև:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Խոսելով մշակույթի մասին՝ չենք կարող անտեսել «արժեք» հասկացությունը, քանի որ արժեքն ու մշակույթը սերտորեն փոխկապակցված են: Մշակույթն ունի արժեքային յուրահատկություն և դա նրան փոխանցում է մարդը, իսկ արժեքը առարկայի նկատմամբ մարդու վերաբերմունքի ցուցանիշն է:

Անձի արժեքային համակարգի ձևավորումը իրականանում է հասարակական շփումների արդյունքում, սոցիալականացման ընթացքում: Եվ այս գործընթացում կարևոր դեր ունեն ուսումնական հաստատությունները, որտեղ իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքի շնորհիվ իրականացվում է սովորողի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը: Գրերի գյուտից հետո Մ. Մաշտոցի և Ս. Պարթևի ջանքերով հիմնված առաջին դպրոցների առաքելությունը սերունդների հայեցի դաստիարակության իրականացումն էր և, իբրև պատգամ, այդ սուրբ գործառույթը իրականացրել և իրականացնում է հայ դպրոցը առ այսօր : Մշակույթի պահպանման և զարգացման գործում կարևոր դեր ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ հումանիտար ոլորտի ուսումնական առարկաները: Եվ մասնավորապես «գրականություն» առարկայի դասավանդումը առանձնահատուկ կարևորություն ունի անհատի արժեքային համակարգի ձևավորման գործում:

Մանկավարժության հիմնախնդիրներից է սովորողի ազգային գիտակցության ձևավորումը մշակութային արժեքների միջոցով: Տարբեր ուսումնական առարկաների դասաժամերին, առնչվելով մշակութային տարբեր արժեքներին, աշակերտը դրսևորում է որոշակի վերաբերմունք ազգային և համաշխարհային մշակութային արժեքների նկատմամբ և փոխվում է նաև վերաբերմունքն իր անձի հանդեպ՝ որպես այդ մշակույթի կրողի և պահպանողի: Սովորողի վրա մեծ ազդեցություն ունեն հեռուստատեսությունը, կինոն, թատրոնը, համացանցը և, հաշվի առնելով այս հանգամանքը, ուսումնական հաստատությունը հանդիսանում է այն կարևոր կառույցը, որը կողմնորոշիչ դեր է կատարում անհատի կյանքում նրա անձնային զարգացման, որպես արժեքային բարձր համակարգ ունեցող քաղաքացու ձևավորման ճանապարհին:

ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՔ

Գաղտնիք չէ, որ մշակույթը մարդկության գոյության իմաստավորման և զարգացման գրավականն է: Կարևոր է հոգևոր մշակույթի ժառանգության իմացությունը՝ այն արժևորելու, պահպանելու և զարգացնելու համար:Եվ այս առումով անգնահատելի է գեղարվեստական գրականության դերը:Հոգևոր մշակույթն է ձևավորում արժեքներ, որոնք անհատի էության բնութագրման միջոց են հանդիսանում: Մշակույթի հյուղերն են՝ լեզուն, գրականությունը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, նկարչությունը,

երաժշտությունը, թատրոնը, կինոն և այլն: Նշենք նաև, որ մշակույթի հիմքը համարվում է գրականությունը: Լինելով ժամանակային արվեստի տեսակ՝ այն միաժամանակ հիմք է ծառայում արվեստի տարածական և համադրական տեսակների զարգացման համար: Գրականությունը իրականության ճանաչման և արտացոլման ձևերից մեկն է: Ինչպես ասել է ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանը.«Այո, գրականությունը հայելի չէ լոկ, և եթե հայելի էլ ասենք, ապա շատ տարօրինակ ու կախարդական մի հայելի է նա: Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին, և ձգտում է կյանքում ստեղծել մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ տվել է նրան աստված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից»:

Ազգը և անհատը մասնավորապես ձևավորվում և արժևորվում է իր մշակույթով, որի շնորհիվ ձևավորվում է ակնածանք և սեր հայրենիքի հանդեպ: Ինչպես նշել է Շիրվանզադեն. « Որքան գրականությունը մեծ ազդեցություն ունի հասարակական մտքի ու հոգու զարգացման վրա, նույնքան յուր կողմից հասարակությունը ներգործական դեր է կատարում ազգային գրականության նկատմամբ»:

Ի տարբերություն հոգևոր մշակույթի մյուս ձևերի՝ արվեստը իրականությունը ներկայացնում է գեղարվեստական պատկերների միջոցով և հիմք է ծառայում անձի համակողմանի զարգացման, ունակությունների և կարողությունների բացահայտման համար: Խոսելով մեր ազգային մշակույթի մասին՝ տեղին կլինի մեջբերել Հ. Գևորգյանի հետևյալ դիտարկումը. «Հայաստանը այն սակավաթիվ երկրներից էր, որը, գտնվելով անտիկ քաղաքակրթության օրրանի շրջանում, պահպանեց անտիկ մշակույթը և իրականացրեց նրա այն յուրօրինակ սինթեզը քրիստոնեության հետ, որը մոտ հինգ դար անց բնութագրական դարձավ նոր Արևմտյան քաղաքակրթության ձևավորման համար, եվրոպական նոր ազգերի պատմության մեջ»:

Կարևոր հանգամանք է նաև այն, որ հայերը իրենց մշակութային գործունեությամբ մշտապես նպաստել են տարածաշրջանի մշակութային կյանքի զարգացմանը՝ մշակութային միջավայր ստեղծելով Թիֆլիսում, Կ. Պոլսում, Զմուռնիայում և այլն: Եվ այս գործընթացում հսկայական է գրականության դերը՝ որպես աշխարհը ճանաչելու, մարդու միտքը զարգացնելու միջոց:Գրականության առանձնահատկություններից է նաև ընթերցողի ներաշխարհի վրա ազդելու կարողությունը:Այն ձևավորում է անձի ներաշխարհը, հարստացնում խոսքը, օգնում մեզ պահպանել դարերի ընթացքում ձեռք բերած փորձը և փոխանցել սերունդներին: Ինչպես ասել է Ա. Ի. Սոլժենիցինը. «Գրականությունը ազգի կենդանի հիշողությունն է»:

Գեղարվեստական գրականությունը միակն է արվեստներից, որ իր պատկերները կերտում է խոսքի օգնությամբ: Եվ հայկական մշակույթի զարգացման գործում անգնահատելի է հայոց լեզվի դերը: Մենք մեր առջև խնդիր ենք դրել ձևավորել աշակերտների մեջ մայրենի լեզուն և գրականությունը կարևորելու հմտություններ՝ որպես ազգային ինքնության պահպանման և համամարդկային մշակութային ժառանգության մեջ ազգային մշակույթի առանձնահատկության գլխավոր գրավական: Աշակերտները պետք է կարևորեն հայ մշակույթը և դրա տեղն ու դերը համաշխարհային մշակույթում: Մեր առաքելությունն է աշակերտների մեջ ձևավորել ազգային գիտակցություն՝ չանտեսելով իհարկե համամարդկային արժեքները:

Պատահական չէ, որ գրականությունը համարում են արվեստների մայր, քանի որ բացառիկ է գրականության տեղն ու դերը արվեստների համակարգում: Գրական երկերն ընթերցողին տեղափոխում են տարբեր ժամանակներ՝ բացահայտելով տվյալ միջավայրի պատկերները: Հայ ժողովուրդը բարձր է գնահատում հոգևոր մշակույթի յուրաքանչյուր տարր՝ բանաստեղծություն, կինոնկար, երաժշտություն և այլն, և փոխանցում դրանք սերունդներին՝ իբրև խոսուն վկաներ հայ ժողովրդի տաղանդի և ստեղծագործ մտքի:Արվեստը հասկանալու համար անհրաժեշտ է կրթված լինել, և դրան կարելի է հասնել ընթերցանության միջոցով: Եվ ահա, սովորողների շրջանում մշակույթի, դրա զարգացման գործում գրականություն առարկայի դերի կարևորմանը հասնելու ճանապարհ ընտրեցինք գրականությունը՝ որպես մշակույթի բաղկացուցիչ մաս ներկայացնելը, ընթերցանության հանդեպ հետաքրքրության ձևավորումը, իսկ այդ նպատակին հասնելու համար կիրառեցինք տարբեր մեթոդներ և հնարներ:

«Գրականությունը արվեստում» խորագիրը դարձավ գրականության դասաժամերին ուսումնասիրվող տարբեր թեմաների դասավանդման խթանը: Աշխատանքի էությունը հետևյալն էր. այն ստեղծագործությունները, որոնք իրենց արտահայտությունն ունեն մշակույթի այլ բնագավառներում, ուսումնասիրվում են հետևյալ կերպ.

Նախ՝ աշակերտները ունկնդրում կամ դիտում են արվեստի համապատասխան գործերը, վերլուծում, գրանցում իրենց տպավորությունները, մեկնաբանում, հետո՝ ընթերցում են համապատասխան ստեղծագործության բնագիրը և դարձյալ կատարում վերլուծություն:

Իրենց տպավորությունները ներկայացնում են ստեղծագործությունն ընթերցելուց առաջ և հետո: Կիրառվում է «Քառաբաժան» մեթոդը.

1.Ի՞նչ տեսա	3.Ի՞նչ զգացի
2.Ի՞նչ լսեցի	4.Ի՞նչ հասկացա

Ներկայացնենք մի քանի օրինակ.

Գրականությունը որպես երաժշտության հիմք.

Հայ ֆնարերգությանը վերաբերող թեմաներն ուսումնասիրելիս աշակերտները ունկնդրեցին Կոմիտասի շարականները: Նրանց հանձնարարվեց գրել իրենց զգացողությունները:Ապա՝ ծանոթացան հոգևոր երգի տեսակներին, ուսումնասիրեցին հայ ֆնարերգության զարգացման փուլերը, ընթերցեցին Մ. Մաշտոցի, Խորենացու, Շնորհալու շարականները: Ուսումնասիրեցին Կոմիտասի գործունեությունը, թե ինչպես մշակելով շարականները, մեներգերն ու պարերգերը, ապրեցրեց հայ մշակույթը: Աշակերտների ընդհանուր տպավորության և իհարկե վերաբերմունքի վրա յուրահատուկ ազդեցություն ունեցավ այցելությունը Կոմիտասի թանգարան, որտեղ առնչվելով նաև պատմական կարևոր փաստերի հետ, աշակերտները խոստովանեցին, որ շարականները կրկին ունկնդրելիս ունեցան բոլորովին նոր զգացողություններ:

Սայաթ-Նովա, Մ. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը», Ռ. Պատկանյան, «Օրորոցի երգ», Համո Սահյանի ստեղծագործությունները, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները և այլն. սրանք այն թեմաներն են, որոնք ուսումնասիրելով գրականություն առարկայի դասաժամերին՝ սովորողը համոզվում է, որ գրականությունը հիմք է հանդիսացել երաժշտական տարբեր ժանրի ստեղծագործությունների համար: Եվ ընդունում է, որ առավել հետաքրքիր է դառնում իրեն հայ երաժշտության այնպիսի գոհարների ստեղծման պատմությունը, ինչպիսիք են Ա. Տիգրանյանի «Անուշ», Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ», Տ. Զուլխաճյանի «Արշակ Բ» օպերաները և այլն, որոնց հիմքում իրեն ծանոթ գրական ստեղծագործություններ են: Գրականությունը օգնում է ավելի լավ ընկալել երաժշտական ստեղծագործությունը, գնահատել այն, և, փոխադարձաբար, երաժշտության շնորհիվ էլ մեծանում է ստեղծագործության հուզական ազդեցությունը մարդու վրա:

Ինչպես ասել է Հովհ. Թումանյանը.«Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին, զգացմունքներին և կենդանի շունչ է տալիս բանաստեղծությանը, որ նա ապրի մշտապես, բայց որ նա թռչի, դրա համար թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհում, որ կոչվում է երաժշտություն»:

Երաժշտության մասին այսպիսի կարծիք ունի հայտնի մանկավարժ Վ. Սուխոմլինսկին. «Երաժշտությունը մտքի հզոր աղբյուր է: Առանց երաժշտական կրթության անհնար է լիարժեք ունենալ մտավոր զարգացում»:

«Երաժշտությունն ունակ է որոշակի ազդեցություն գործելու հոգու էթիկական կողմի վրա, և քանի որ երաժշտությունն ունի այդպիսի հատկություն, այն պետք է ներառվի երիտասարդների կրթության առարկաների շարքում»:

Արիստոտել

Սովորողներն իրենց հետաքրքրությունը թեմայի նկատմամբ արտահայտում են նաև իրենց ստեղծագործություններով:

«Սայաթ-Նովա»՝ հեղինակ Հրազդանի N 2 հիմն. դպրոցի աշակերտուհի Ա. Աթանեսյան

Գրականություն և կերպարվեստ.

Կերպարվեստը, միավորելով գեղանկարչությունը, քանդակագործությունը, գրաֆիկան, դեկորատիվ-կիրառական արվեստը, ներկայացնում է իրականությունը:

Գրականություն առարկայի ուսումնասիրման ընթացքում ծրագրային տարբեր թեմաների շրջանակներում սովորողները հաղորդակից են լինում կերպարվեստի տարբեր տեսակներին պատկանող ստեղծագործություններին: Գրականությունը նկարագրում է իրականությունը բառերի միջոցով, նկարչությունն ու քանդակը արտացոլում են այն ՝ օգտագործելով գույնը և ձևը: Գրական ստեղծագործությունը կարծես արտահայտում է նկարի բովանդակությունը՝ բացահայտելով հեղինակի ասելիքը: Բանահյուսական ժանրի ստեղծագործություններն ուսումնասիրելիս աշակերտները դրանց արտահայտությունը գտնում են կերպարվեստի դիցաբանական ժանրում: Օր. «Ծամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ»՝ հեղինակ Վ. Սուրենյանց, «Սասունցի Դավիթ» կտավը՝ հեղինակ Հ. Կոջոյան: Եվ իհարկե Ե. Քոչարի հեղինակած «Սասունցի Դավիթ» արձանը: Աշակերտները մեկնաբանում են նկարները, արձանը՝ նախքան բանահյուսական նյութի ընթերցումը: Իսկ հետո արտահայտում իրենց կարծիքը արվեստի գործերի մասին նյութի ուսումնասիրությունից հետո: Այսպիսի թեմաները հնարավորություն են տալիս սովորողին ծանոթանալ և ուսումնասիրել արվեստի տարբեր ստեղծագործություններ, որոնք զարգացնում են նրա երևակայությունը, ձևավորում գեղագիտական ճաշակ: Հանրակրթական դպրոցի կարևոր նպատակը անձի համակողմանի զարգացումն է, և այս հարցում կարևոր դեր է կատարում գեղագիտական դաստիարակությունը: Եվ դրա իրականացման գործում առավել մեծ է հումանիտար առարկաների դերը:

Հատկանշական է, որ այս հնարը ոչ միայն մեծ հետաքրքրություն առաջացրեց դեպի տվյալ գեղարվեստական ստեղծագործությունը, այլև նպաստեց սովորողների ստեղծագործական ունակությունների բացահայտմանը: Ներշնչվելով ժողովրդական բանահյուսության գոհարների տարատեսակ մեկնաբանություններից՝ նրանք ևս ստեղծագործեցին այս թեմայով՝ հավաստելով, որ հնարավոր է տարբեր հետաքրքիր մեթոդների և հնարների կիրառմամբ սովորողների հոգում սերմանել սեր դեպի գրականությունը, որը ոգեղեն կամուրջ է հանդիսանում արվեստի մյուս տեսակների միջև:

Ներկայացնում ենք մեր աշակերտուհու հեղինակած նկարը՝ «Հայկ և Բել», հեղինակ՝ Ա. Աթանեսյան:

Գրականությունը և կինոն.

Հայ թատերգության արժեքներից մեկը՝ «Պեպո» թատերգությունն ուսումնասիրելիս աշակերտները համոզվում են, որ գրականությունը հիմք է հանդիսանում նաև համադրական արվեստների, այս դեպքում՝ կինոյի համար: «Պեպոն» հայկական կինոյի լավագույն նմուշներից է, առաջին հնչյունային ֆիլմը, ռեժիսոր՝ Հ. Բեկնազարյան: Ֆիլմի դիտումին հաջորդեց բնագրի ընթերցումը և կատարվեց ֆիլմի սյուժեի և բնագրի սյուժետային համեմատություն: Կարծում ենք ավելորդ է ներկայացնել, թե ինչ դեր ունի կինոն մարդու կյանքում: Կինոյի հաջողությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե որքան կիրթ է կինոդիտողը: Իսկ կիրթ հասարակություն ունենալու գրավականը ընթերցող անհատն է: Իսկապես, ո՞վ կլինեինք մենք առանց մեր մշակույթի, առանց կինեմատոգրաֆիայի և մշակույթի մյուս ոլորտների: Առաջարկեցինք աշակերտներին դիտել մեր ֆիլմաշխարհի գլուխգործոցները, ինչպիսիք են «Նահապետը», «Ձորի Միրոն», «Խնձորի այգին», «Մենք ենք, մեր սարերը» և այլն՝ նպատակ ունենալով ձևավորել հետաքրքրություն հայ կինոյի հանդեպ : «Պեպո» թատերգության էկրանավորումը դիտելով՝ աշակերտները համոզվեցին, որ կինոն գրքի ընկալման անհատական ներկայացումն է, և հաճախ կարող է չհամընկնել ընթերցողի ընկալմանը: Գիրքն ընթերցելիս հայտնվում ենք գործողությունների

նկարագրման ժամանակահատվածում, մտովի բեմադրում սյուժեն, և ընթերցած գրքի էկրանավորումը դիտելիս ակամայից համեմատություն ենք կատարում սեփական պատկերացումների և ռեժիսորի պատկերացումների միջև, ինչը զարգացնում է երևույթը տարբեր կողմերից վերլուծելու կարողությունը: Սովորողը բացահայտում է, թե ինչ է համադրական արվեստը, ինչպես է կինոարվեստը միահյուսում գրականության, թատերական արվեստի, երաժշտության և կերպարվեստի հատկանիշները:

Գրականությունը և թատրոնը.

Լինելով համադրական արվեստի տեսակ՝ թատրոնը մեծ ազդեցություն է ունենում մարդու ներաշխարհի վրա, տալիս գեղագիտական հաճույք, սեր գրական երկերի հանդեպ: Թատրոնը դաստիարակչական մեծ նշանակություն ունի սովորողի անհատականության ձևավորման գործում. մղում է նրան ինքնավերլուծության, ինքնաճանաչման: Եվ դառնում ուսումնադաստիարակչական աշխատանքի կարևոր բաղադրիչ :

Աշակերտները մեծ ոգևորությամբ են մասնակցում հատկապես այն դասաժամերին, որոնց ընթացքում կիրառվում է «Ընթերցողի թատրոն» մեթոդը: Մեթոդի էությունը թատերականացված ընթերցանությունն է: Այն օգնում է նյութի ավելի խոր ընկալմանը: Բացի գրական ստեղծագործությունների հանդեպ հետաքրքրություն առաջացնելը, բեմականացումները նպաստում են սովորողների ստեղծագործական, կազմակերպչական կարողությունների, համագործակցային հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը: Այս մեթոդը կիրառելով տարբեր դասարաններում՝ կարող ենք փաստել, որ այն մեծ ոգևորություն է առաջացնում բոլոր սովորողների մոտ:Աշակերտները ստեղծագործության դիպաշարին համապատասխան բեմագիր են կազմում, բաշխում դերերը և բեմադրում ստեղծագործությունը: Բեմականացումն ավարտելուց հետո կատարվում է քննարկում:

Կատարում ենք անդրադարձ.

Սովորողները լրացնում են աղյուսակը.

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ սովորեցի	Ի՞նչ առաջարկությունն եր ունեմ

Կատարում ենք ամփոփում:

Այս մեթոդի շնորհիվ հետաքրքրություն է առաջանում դեպի թատրոնը, դերասանական արվեստը, դերասանների գործունեությունը: Կատարվում է մեկ այլ կարևոր իրողություն. բացահայտվում են սովորողների ունակությունները. չէ՞ որ թատրոնը իր մեջ համադրում է երգը, պարը, բեմական խոսքը և այլն: Թատրոնը փոխանցում է դրական հույզեր, հնարավորություն տալիս կիսել ինչ-որ մեկի ապրումները, ստիպում կարեկցել հերոսներին: Այն իրավամբ համարվում է անձի գեղագիտական և հոգևոր դաստիարակության կարևոր միջոց:

Ընթերցանության հանդեպ հետաքրքրության մեծացման, սովորողին հայ և համաշխարհային գրականությանը հաղորդակից դարձնելու, ազգային մշակութային արժեքների պահպանման և զարգացման գործում անչափ կարևորում ենք նաև գրադարանների հետ համագործակցությունը:Գրադարան հաճախակի այցելությունները, կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներն անկասկած իրենց հետքն են թողնում սովորողի մոտ գրականության հանդեպ ակնածանքի ձևավորման գործում: Կոտայքի մարզային գրադարանի հետ համատեղ մշակել և իրականացրել ենք վիկտորինա՝ «Չարենցը խաղերի մեջ» խորագրով, կլոր սեղան –քննարկում՝ *«100* փաստ» խորագրով՝ փորձելով այդպես մտերմացնել աշակերտներին գրքի հետ, հաճելի և հետաքրքիր դարձնել ընթերցանությունը: Եվ կարող ենք փաստել, որ այսպիսի տարաբնույթ միջոցառումները դրական արձագանք են գտնում սովորողների շրջանում, նրանք սիրով մասնակցում են կազմակերպչական աշխատանքներին, ընթերցում են լրացուցիչ գրականություն տվյալ թեմայի վերաբերյալ՝ կարևորելով մրցունակ լինելու փաստը: Ինչպես ասել է Մ. Գորկին.«Չկա ավելի մեծ ուժ, քան գիտելիքը.գիտելիքներով զինված մարդն անպարտելի է»:

«Չարենցը խաղերի մեջ», վիկտորինա՝ Հրազդանի *N 2*հիմն. դպրոցի *VII*ա և *VII*բ դասարանների աշակերտների մասնակցությամբ *(2022-2023* ուստարի*)*

Կոտայքի մարզային գրադարան

«100 փաստ» խորագիրը կրող կլոր սեղան-քննարկում՝ Հրազդանի *N 2*հիմն. դպրոցի *5*-րդ բ դասարանի սաների մասնակցությամբ

Կոտայքի մարզային գրադարան

Այսպիսի բնութագրումները նպաստում են սովորողների լեզվական հմտությունների զարգացմանը՝ բառապաշարի հարստացմանը, բանավոր գրագետ խոսք կառուցելուն:

Սովորողների մոտ զարգանում են վերլուծելու և համադրելու հմտությունները, սեփական կարծիքը ներկայացնելու և հիմնավորելու կարողությունները:

Ձևավորվում է դիմացինին լսելու, հարգելու և համագործակցային այլ կարողություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրականացնելով հետազոտությունը՝ եկանք այն եզրակացության, որ գրականությունը իսկապես մշակույթի բաղկացուցիչ մասն է, ազգային մշակույթի զարգացման հիմքը: Ազգային արժեքները պահպանելու և զարգացնելու գործում ունենալով բացառիկ դեր՝ գրականությունը պետք է շարունակ արժևորվի և լինի սովորողների հետաքրքրության կենտրոնում:Եվ այս գործում կարևոր է ուսուցչի գործառույթը, ով պետք է որոնի և գտնի ուղիներ գրականության և ընթերցանության հանդեպ սեր սերմանելու համար: Կարող ենք փաստել, որ մեր կիրառած մեթոդները բավական արդյունավետ էին: Բացահայտելով գրականության և արվեստի մյուս տեսակների միջև կապը՝ աշակերտները սկսեցին մեծ հետաքրքրություն ցուցաբերել արվեստի տարբեր բնագավառների ստեղծագործությունների նկատմամբ, և առավել դեպի գրականությունը՝ դիտելով այն որպես իրենց նախընտրած արվեստի տեսակի զարգացման միջոց: Ձևավորվեց հարգանք դեպի ազգային մշակույթը, դեպի հայրենիքն ու գրականությունը: Աշակերտների հետ համագործակցության, նրանց մասնակցությամբ տարբեր միջոցառումների կազմակերպման, տարբեր թեմաների ուսուցումը հետաքրքիր մեթոդների օգնությամբ կազմակերպելու արդյունքում կարող ենք հասնել մեր նպատակին. սովորեցնել կարևորել սեփական մշակույթը, հայ գիրն ու գրականությունը, համաշխարհային մշակութային ժառանգության մեջ ազգային մշակույթի դերը:

Գրականության դասերը միջոց են աշակերտների մեջ արժեքներ ձևավորելու համար:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների ընդհանուր զարգացման խնդիրները:

Գրականության դասաժամերին արվեստի մյուս տեսակների հետ կապի պահպանումը նպաստում է սովորողների գեղագիտական ճաշակի զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

*1.*Էդ. Մ. Ջրբաշյան*,* Գրականության տեսություն*,* Երևան *1961*

*2.*Ս. Ա. Սարգսյան*,* Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն*, 2004*

3. Հ. Գևորգյան*,* Ազգ*,* ազգային պետություն*,* ազգային մշակույթ*,* Երևան *1997*

4. Գ. Մելքումյան*,* Մշակութաբանություն*,* Երևան*, 2001*

5. Ս. Խաչատրյան*,* Ուսուցման արդյունավետ հնարներ*, 2020*